

Ադր. ԽՍՀ Լուսավորման.
Մեծահասակների դպրոցների վարչութիւն

ԾՐԱԳԻՐ

ՄԵԾԱՀԱՍՍԿՆԵՐԻ ԱՆԳՐԱԳԻՏՈՒ-
ԹՅԱՆ ՅԵՎ ԿԻՍԱԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ՎԵՐԱՑՄԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ
ԹՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ
ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

374
Ծ-98



Ա. Զ. Ե. Բ. Ե. Ը. Բ.
Բազու — 1938 թ.

- .01. 2013



1863
38

374
Օ-98
uy

- MAR 2010

**ՄԵԾԱՀԱՍԱԿՆԵՐԻ ԱՆԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ՎԵՐԱՑՄԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ**

**ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ
(200 Ժամ)**

Ը ն թ ե ր ց ա ն ու ր յ ու ն . —

Հատվող այբբենի գործածությունը, կարողանալ բառեր կազմել և կարգալ առանց տառ բաց թողնելու: Կարողանալ բարձրաձայն, կանոնավոր կերպով կարգալ պարզ պատմվածքներ ու հոգվածներ՝ կանգ առնելով վերջակետից հետո:

Կանոնավոր կարգալ դասադրքում — այբբենարանում յեղած ձեռագիր հոգվածները և թե ուսուցչի կողմից գրատախտակի վրա գրված տեքստը: Կարողանալ պատասխանել կարգացածի շուրջն՝ ուսուցչի կողմից տրված պարզ հարցերին:

Կարողանալ կարգալ տեղական լրագրերում յեղած մատչելի հոգվածները, հասկանալ և հաղորդել նրանց համառոտ բովանդակությունը:

Աստիճանաբար վարժեցնել կանոնավոր, արտահայտիչ և բարձրաձայն կարգալուն, իսկ ընթերցարանի բաժնում սկսել նաև ինքնուրույն կերպով լուռ, գիտակցական կարգալու փորձեր կատարել:

Կարողանայ անձանոթ բառերն առանձնացնել: Կարդալու ժամանակ հասկանալ ընդհանուր գործածական տերմինները:

Գրավոր աշխատանք.—

Պահպանելով տառերի և բառերի սովորական հեռավորութիւնները, կարողանալ գրել մաքուր և պարզ:

Ինքնուրույն կերպով կարողանալ գրել համառոտ նախադասութիւններ՝ առանց տառեր բաց թողնելու և առանց ավելորդ տառեր գրելու բառերի մեջ. պահպանել նախադասութեան վերջում վերջակետի գործածութիւնը: Գրավոր աշխատանքի ժամանակ կարողանալ պահպանել տարրական ուղղագրական կանոնները՝ մեծատառի գործածութիւնը նախադասութեան և հատուկ անունների սկզբում, ոժանդակ բայի առանձին գրվելը՝ գրութեան և արտասանութեան տարբերութիւնը:

Կարողանալ անսխալ կերպով գրել քաղաքական և արտադրական այն տերմինները և բառերը, վորոնք սովորաբար առորյա կյանքում գործածական են (հեղափոխութիւն, կոլեկտիվ, կոլանտեսութիւն, տեխնիկում, կոմբայն և այլն):

Գրել և կարողանալ կարգալ ամենագործածական կրճատ բառերը՝ իՍՂՄ, Ա.ԻՍՂ, Ժողկոմ. խորհ, Գործկոմ, Գյուղխորհուրդ, ՄՏԿ:

Կարողանալ գրի առնել իր մտքերը, գրել հասցե, լրացնել հարցաթերթիկ, պարզ ու մատչելի հարցերին տալ գրավոր պատասխաններ, տարեվերջում գրել նամակ:

ԲԱՑԱՏՐԱԿԱՆ

(Մտակման հաշուդականութիւնը)

Մտադիրը կազմված է յերկու հիմնական բաժնից՝ 1) ընթերցանութիւն և 2) գրավոր աշխատանք: Ինքնին հասկանալի յե, վոր ծրագրի հիշված բաժինների նյութերը մշակվելու յեն վոյթե առանձին-առանձին, այլ սերտ կերպով կապակցված են լինելու միմյանց հետ:

Խոսքի զարգացման, ինչպես նաև գրքով ու լրագրով տարվող աշխատանքները պետք է շարկազմված լինեն ընթերցանութեան և գրավոր աշխատանքների հետ:

Ընթերցանութիւն.—

Վորպեսզի կարողանան ձեռք բերել գրելու և կարգալու սկզբնական ունակութիւն, ամենից առաջ սովորողները պետք է հասկանան, վոր բառը կազմված է վանկերից, իսկ վանկը՝ հընչիւններից: Նրանք պետք է իմանան, վոր նախադասութիւնը բաժանվում է բառերի, բառերը՝ վանկերի, վանկերը՝ հնչիւնների և վոր յուրաքանչյուր հնչիւն ունի համապատասխան տառ:

Սովորողները կարգալու ժամանակ պետք է կարողանան բառերը բաժանել վանկերի և վանկերը հնչյունների—տառերի: Հատվող այբբենով կազմել բառեր, կանոնավոր գրի առնել կազմված բառերը և կարդալ:

Այբբենարանով կարգալու ժամանակ, բառերի ընտրության տեսակետից պետք է պահպանել աստիճանականութուն ա) միավանկ և յերկվանկ բառեր կարգալը (վար, ցանք, նավ, ցորեն, գարի և այլն) և այնպիսի պարզ նախադասություններ, վորոնք կապված լինեն նման բառերից. բ) յերեք վանկանի բառեր կարգալը (մեքենա, շարքացան և այլն). կարգալ այնպիսի նախադասություններ, վորոնք կազմված են թե այս և թե նախորդ տիպի բառերից. գ) մեկ փակ վանկ ունեցող բառերը և համապատասխան նախադասություններ կարգալը. դ) կարգալ այնպիսի բառեր, վորոնք ունեն յերկու բաղաձայն:

Սկզբնական շրջանում պետք է անցնել այնպիսի բառեր, վորոնք գրվում են այնպես, ինչպես արտասանվում են, խույս տալով այնպիսի բառերից, վորոնց ուղղագրությունը տարբեր է արտասանությունից, որինակ՝ մարդ, վարդ և այլն:

Սովորողները, աստիճանաբար ձեռք բերելով կարգալու ունակություն, սկսում են կարգալ համառոտ պատմություններ, հողվածներ, լոգոսներ, պրակատներ, հայտարարություններ, պահապանելով կետադրական նշաններից վերջակետը և պատասխանելով կարգացած նյութի շուրջ տրված հարցերին:

Ուսումնական տարվա առաջին կիսամյակում սովորողները պետք է ձեռք բերեն պարզ պարբերություններն ամբողջ բառերով, իսկ բարդ, յերկար բառերը՝ վանկ-վանկ կարդալու ունակություն:

Յերկրորդ կիսամյակում սովորողների մեջ պետք է ավրացնել ամբողջ բառերով համեմատաբար բարդ պարբերություններ կարգալու ունակություն: Բարձրաձայն կարգալու հետ միասին սովորողներին վարժեցնել դասազրքում, այլ գրքույկներում և լրագրերում յեղած պարզ հողվածների լուռ ընթերցմանը: Նման ձևի ընթերցանությունը դասատուն պետք է անցնի այն ժամանակ, յերբ սովորողները կսկսեն ինքնուրույն կերպով կարգալ պարզ հողվածներ: Վորպես լրացուցիչ նյութ—դասատուն բարձրաձայն կարգում է սովորողներին հետաքրքրող լրագրական առանձին հողվածներ կամ պատմվածքներ, բացատրելով սովորողներին անձանոթ բառերն ու դարձվածքները. միաժամանակ դասատուն սովորողներին ևս մասնակից է դարձնում գրքեր և լրագրեր կարգալուն: Սովորողների մեջ ընթերցանության սեր զարթեցնելու և այդ ունակությունը զարգացնելու նպատակով, դասերից դուրս պետք է կազմակերպել լրագրերի ու գրքերի ընթերցանություն:

Ընթերցանություն սովորեցնելու հետ միասին, պետք է սովորողներին պատվաստել ուրիշների կարգալը լսելու և հասկանալու ունակությունը (պարզ հողվածներ և զեղարվեստական գրվածքներ): Անհրաժեշտ է սովորողներին ծա-

նոթացնել գրագարանի ընդհանուր նշանակու-
թյան և գրքեր պատնալու կարգի հետ և ներգրա-
վել նրանց անդամագրելու գրադարանին:

Դասատուն հաճախ սովորողներին տալիս է
կարգալու համար հետաքրքրական նյութեր, հետևե-
լով, վոր նրանք անպայման կարգան և հաշվե-
տու լինեն իրեն:

Սովորողների խոսքի զարգացման աշխատանք-
ները տարվում են անձանոթ բառերի ու տեր-
մինների բացատրությամբ, պատվաստելով այն-
պիսի ունակութուն, վորպեսզի նրանք կարողանան դասատուի տված հարցերին պատասխանել բանավոր և գրավոր կերպով. կարգացած հոգւածի բովանդակութունը կապակցված կերպով պատմել:

Դասատուն հետևում է սովորողների խոսե-
լու ձևին և ուղղում է նրանց սխալները:

Գրավոր աշխատանք.—

Չեռագրի ուսուցման ժամանակ սովորողներին պետք է վարժեցնել կանոնավոր նատել գրիչն ու մատիտը կանոնավոր բռնել, կարողանալ վարվել տետրի ու թանաքաման հետ: Սովորողները պետք է կարողանան կանոնավոր կերպով ձևակերպել փոքրատառերն ու մեծատառերը: Տառեր գրելու հետ միասին սովորողները վարժվում են գրել ամբողջ բառեր և նախադասություններ. ձեռք են բերում հասկացողութուն անունների ու ազգանունների, ինչպես նաև նախադասության սկզբում մեծատառերի գործածության մասին:

Ուսումնական տարվա առաջին կիսամյակի վերջում սովորողները պետք է կարողանան պարզ և կանոնավոր ձևակերպված տառերով գրքից արտագրել տպագիր և ձեռագիր տեքստերը և լսողությամբ (նախորոք վերլուծելուց հետո) գրի առնել կարճ նախադասություններ՝ բաղկացած այնպիսի բառերից, վորոնք զբվում են այնպես, ինչպես արտասանվում են:

Ուսումնական տարվա յերկրորդ կիսամյակի ընթացքում սովորողները պետք է ավելի ամբացնեն ամբողջ անցած նյութը, ձեռք բերեն ուղղագրական գիտելիքներ և ունակություններ:

Ուղղագրական գիտելիքները և ունակություններն անցնում են հետևյալ կարգով. հասկացողութուն ձայնավոր և բաղաձայն տառերի մասին: Բառերի բաժանումը վանկերի: Տողադարձ: Վերնագիրը, պարբերությունը և հատուկ անունները մեծատառով սկսելը. վերջակետի գործածությունը: Պարապմունքների ամբողջ ընթացքում սովորողները վարժվում են, առանց տառերը բաց թողնելու, ամենագործածական քաղաքական և արտագրական տերմինները, համատած բառերն անսխալ գրել:

Այս և նման ձևով սովորողները հասնում են ինքնուրույն գրավոր աշխատանք կատարելուն: Սովորողների զրավոր ունակությունները պարզելու և այն խորացնելու նպատկով՝ դասատուն հաճախ զրատախտակի վրա անհատ սովորողներին զրավոր վարժություններ է տալիս, տալով միաժամանակ տնային աշխատանք:

ՀԱՅՈՅ ԼԵԶՈՒ

(Կիսազբազեւանների համար)

(145 ժամ)

ԿԱՐԴԱԼՈՒ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կարգալ բարձր, առանց բառերն ազավաղելու, ճիշտ, արագ, հասկանալով և արտահայտիչ կարգալ՝ պահպանելով առողջանության և կետադրության կանոնները:

Լուռ կարգալու ունակություններ: Կարողանալ պատմել կարգացածի բովանդակությունը:

Կարողանալ ոգտվել գրքից, ծանոթանալ գրքին՝ ըստ գրքի հեղինակի, հրատարակության թվի և անվանաթերթի: Կարողանալ ոգտվել ցանկից: Կարողանալ կարգալ թերթ, գտնել նրա մեջ անհրաժեշտ նյութը, հասկանալ վերնագրի, առաջնորդի, հեռագրերի, թղթակցությունների նշանակությունը: Կարողանալ պատմել թերթի վերջին յերկու-յերեք համարների կարևոր նյութերի բովանդակությունը: Կարողանալ բառարանում գտնել կարգալու ժամանակ պատահող անծանոթ բառերի բացատրությունը:

ԲԱՆԱՎՈՐ ՅԵՎ ԳՐԱՎՈՐ ԽՈՍԻԻ

ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կարողանալ՝ գրել նամակ, հասցե, հեռագիր, դիմում, ստացական, լիազորագիր, ժողովների արձանագրություն: Կարողանալ՝ պատասխանել արված հարցերին: Կարողանալ կազմել իր յերույ-

թի պլանը: Կարողանալ կազմել՝ թղթակցություն լրագրի համար, նկարագրել վորևե բան իրենց ռապրումների կամ տեսածի վերաբերյալ, գրավոր կամ բանավոր վերլուծումներ կինո-նկարի, ներկայացման կամ կարգացած գրքի մասին:

ԳՐԵԼՈՒ ՏԵԽՆԻԿԱ, ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Գրելու տեխնիկայի ամրացում. կարողանալ գրել առանց տառեր բաց թողնելու և առանց ավելորդ տառերի, կարողանալ ավելի բարդ (համեմատած ուսման առաջին տարվա հետ) պարզ և գեղեցիկ գրել մի տողանի տետրում: Կարողանալ հողվածից և գեղարվեստական յերկից անսխալ արտագրել քաղվածքներ: Գաղափար նախադասության մասին: Մծատառը նախադասության սկզբում: Վերջակետը նախադասության վերջում: Գիտենալ, թե նախադասություններից ինչպես է պատմվածք ստացվում:

Առողջանության նշանները.—

Գիտենալ հարցական ու բացականչական նշանների և շեշտի նշանակությունը բանավոր խոսքի և գրավորի մեջ, ինչպս նրանց գործածության պարզագույն դեպքերը:

Գիտենալ բառերի կապակցությունը նախադասության մեջ ըստ իմաստի.—

Կարողանալ յրացնել նախադասությունների մեջ բաց թողած կամ հարցերով փոխարինված բառեր թե՛ բանավոր, թե՛ գրավոր, որինակ յեսսուն: Աշակերտները սովորում.....: Աշա-

կերտները վերադարձան.....(վճռատեղից) և այլն: Մեծատառք հասուկ անունների սկզբում.—

Գիտենալ, վոր մարդկանց անունները, հայրանունները, ազգանունները, քաղաքների, լեռների, փողոցների, յերկրների, ծովերի, հիմնարկների, լրագրերի և գրքերի անունները գրվում են մեծատառերով:

Գաղափար կրճատ. բարդ բառերի (ԽՍՀՄ-ում ՀԿ(բ)Կ. Ժողովուրդի և այլն) նրանց նշանակությունը յեվ կազմվածքը:

Հնչյուններ յեվ տառեր.—

Հնչյուն և տառ, ձայնավոր և բաղաձայն: Գիտենալ տառերի այբբենական կարգը. յեվ —ը վորպես սղագրության նշան, գիտենալ, վոր յեվ նշանը ձայնավորից հետո կամ առանձին գործածելիս յեռահնչյուն (յեվ) վանկի նշան է, վոր յեվ ուղղագրության նշանը մեծատառ յեվ չունի, գրվում է լրիվ տառերով (յեվ):

Վանկ յեվ տղադարձ. — Կարողանալ բառերը վանկերի բաժանել և տողադարձ անել: Ը ձայնավորը տողադարձի ժամանակ: Ուղղագրական վարժություններ գրության և արտասանության անհամապատասխանության վերաբերյալ՝ Բ.Վ, Գ Բ, Գ Բ, Զ Զ, Ը Զ, Ը Զ, Ը Զ:

Յենթական և ստորագյալը նախադասության մեջ.—

Համառոտ նախադասության:

Լրացումները նախադասության մեջ.—

Ընդարձակ նախադասություն: Նախադասության գլխավոր և յերկրորդական անդամները:

Կարողանալ համառոտ նախադասությունը դարձնել ընդարձակ և ընդհարձակ նախադասությունը համառոտ:

Գոյական. — Ճանաչել նախադասության մեջ առարկա ցույց տվող բառերը (մարդիկ, կենդանիներ, բույսեր, իրեր, բնական և հասարակական յերևույթներ): Գտնել, թե ինչ հարցերի յեն պատասխանում գրանք (ո՞վ, ի՞նչ): Գաղափար գոյականի մասին: Գոյականների թիվը. գաղափար հնչուն փոխություն մասին (գիրք-գրքեր, ձուկ-ձկներ): Գոյականների վորոշող հոդը: Ը ձայնավորի ուղղագրությունը բառավերջում և բառի սկզբում: Գիտել գոյականի ձևերը՝ իբրև յենթակա և իբրև լրացում գործածվելու ժամանակ (մատիալ կուրսից: Վաճանք կուրսից մատիալ): Գաղափար ուղղական հորվի մասին՝ յենթակայի կապակցությամբ: Հարցերով սովորեցնել մնացած հոդվաները (սեռական, տրական, հայցական, բացառական, գործիական և ներգոյական): Յերեք ձայնակապի ուղղագրությունը:

Ս.ձական.—

Նախադասության մեջ գտնել այն բառերը, վորոնք փոխարինում են գոյականին, անձնական դերանունները՝ յես, դու, նա, մենք, դուք, նրանք:

Բայ.—

Ստորագյալն իբրև գործողություն և դրություն ցույց տվող բառ: Գաղափար բայի մասին: Բայի յոնբահումը՝ բայի ներկա, անցյալ և ապառնի ժամանակները: Բայի յոնարձման ժխտական

ձևը: Բայի անորոշ ձևը: Բայի հրամայական ձևը
վի արգելականի ուղղագրությունը:

Բարդ բառեր.—

Պարզագույն բառերի ոգնությամբ հասկանալ
բարդ և պարզ բառերը: Յե և վն կապակցություն-
ների ուղղագրությունը:

Ա.ծանցավոր բառեր.—

Շատ գործածական նախածանցների և վեր-
ջածանցների ուղղագրությունը:

Գրավոր աշխատանքի ժամանակ ուղղագրական
բառացուցակից ոգավելու վարժություն: Ուղ-
ղագրական բառատետր պահել, նշանակելով այն-
տեղ այն բառերը, վորոնց գրությունը գժվար է:

ԲԱՅԱՏՐԱԿԱՆ

Ծրագրային նյութը յերեք բաժիններով դա-
սավորելն ամենեվին չի նշանակում, թե պետք
է առանձին պարապել կարգալով, առանձին՝ բա-
նավոր և գրավոր խոսքի ունակությունների զար-
գացումով և առանձին՝ ուղղագրությամբ և քերա-
կանությամբ:

Ծրագրի բոլոր բաժինների մեջ պարապմունք-
ների ընթացքում պետք է պահպանվի ամենա-
սերտ կապը:

Կարգալու և գրելու տեխնիկայի, ուղղագրու-
թյան ու քերականության միջև ծրագրով հատ-
կացված 145 ժամը պետք է բաշխել հավասար:

Խոսքի զարգացման հիմնական աշխատանքը
հարում է կամ կարգալուն, կամ գրելուն և քե-
րականության վարժություններին: Անհրաժեշտ

է քերականությունից և ուղղագրությունից
կրկնություններ և ամբողջ անցածներինց ամ-
փոփոմներ կատարել, հատկացնելով նրանց հա-
մար հատուկ ժամեր: Ուսուցչի առաջադրու-
թյուններով պետք է կիրառել նաև սովորողների
լրացուլիչ աշխատանքները դասարանից դուրս
(տնային ընթերցանության, քերականության
դասագրքից վարժություններ և այլն):

Կարդալու պարապմունքները պետք է սկսել
պարզ հոգվածներից և պատմվածքներից: Այդ
աշխատանքի համար նյութ պիտի ծառայեն՝
դասագրքեր կիսագրագետների համար, շրջանա-
յին կամ կենտրոնական թերթերի վոչ բարդ հոգ-
վածներն ու պատմվածքները, «Սկանակ ընթեր-
ցողի գրագարան» կարճ պատմվածքներ և ամ-
բողջական հատվածներ:

Ուսուցիչը պարապմունքների հենց առաջին
որերից պետք է հետևի, վոր սովորողները կար-
գան ամբողջական բառերով, առանց տառեր
բաց թողնելու, առանց աղավաղումների: Շատ
անհրաժեշտ է, վոր հասակավոր մարդը, ավարտե-
լով կիսագրագետների դպրոցը, կարողանա կար-
դալ վոչ միայն բարձր, այլև լուռ, վորպեսզի
կարողանա իր պարապմունքների ընթացքում
ինքնուրույն ոգավել գրքից:

Յերբ կիսագրագետների կարգալու տեխնի-
կան մի քիչ լավանում է, պետք է դպրոցում
լուռ կարդալու վարժություններ կատարել, ու-
սուցչի կողմից տրված զանազան առաջադրանք-
ներով տրված հարցերով կարևոր տեղերն ընտ-

րել կամ արտագրել, տրված պլանով հողվածք մասերի բաժանել և այլն:

Պարապմունքների ընթացքում ուսուցիչը պետք է սովորողների մեջ աստիճանաբար սեր զարգացնի դեպի թերթը, կարգալուծ նրանց համար հետաքրքրական և արժեքավոր նյութեր, կազմակերպելով թերթի կուրսերով ընթերցանություն:

Այս աշխատանքի հիմնական նպատակն է, վոր սովորողների համար թերթի կարգալուծ դառնա միանգամայն մատչելի և սովորական աշխատանք:

Վորպեսզի սովորողներին վարժեցնել ինքնուրույն ընթերցանություն, պետք է նրանց տանը կարգալուծ համար տալ մատչելի և նրանց հետաքրքրություն համապատասխան գրքույկներ, պետք է ղարոցում կազմակերպել տան կարգացած գրքերի քննարկում, պետք է բարձր կարգալուծ և քննարկել գեղարվեստական գրականություն յերկեր:

Դասարանում և տանը կարգալուծ համար սովորողներին անհրաժեշտ է հանձնարարել ընկ. ընկ. Լենինի, Ստալինի, Մուրոսովի, Վորոշիլովի, Կալինինի, Կազանովիչի առանձին ճառերը և հոգվածները, ինչպես և գեղարվեստական գրականությունից յերկեր և ամփոփ հատվածներ Մուրացանից, Նար Դոսից, Շիրվանզադեյից, Հովհաննես Թումանյանից, Ստեփան Զորյանից և այլն:

Անհրաժեշտ է գեղարվեստական և մատչելի վոտանավորներ և առակներ անգիր սովորեցնել: Դպրոցը պետք է սիստեմատիկ կերպով սովորողներ-

րին վարժեցնի ոգավելու գրագարանից, պետք է սովորեցնի գրացուցակով գիրք ընտրելու:

Բանավոր յեվ գ ավոր խոսքի ունակությունները զարգանում են կարգալուծ և գրելու ու քերականություն պարապմունքների հետ զուգընթացաբար: Կարգալուծ դասարանում և տանը, սովորողները հարստացնում են իրենց բառապաշարը, ծանոթանում են հասարակական և քաղաքական կյանքում շատ տարածված տերմիններին:

Այս ունակություն զարգացման համար պետք է վարժեցնել տրված հարցերի պատասխաններին՝ գեղեցիկ ձևակերպումով, ընդարձակ նախադասությունները կրճատելով և համառոտ նախադասություններն ընդարձակելով:

Պոսքի զարգացման աշխատանքները պիտի կատարել ամբողջ տարվա ընթացքում հայոց լեզվի բոլոր դասերին:

Պետք է առաջին կիսամյակում կիսագրագետներին սովորեցնել կազմել գործնական գրություններ, ստացականներ, լիազորագրեր, նամակներ և դիմումներ, ծանոթացնելով սովորողներին այդ գրությունների որինակներին:

Յերկրորդ կիսամյակում կիսագրագետները պետք է սովորեն գրել թղթակցություններ, նկարագրել տեսածը և ապրածը:

ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՎԻ ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ԲՈՎԱՆ-
ԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԴՊՐՈՅՈՒՄ

Մեծահասակների դպրոցում դասավանդվող մայրենի լեզվի հիմնական խնդիրները, ըստ ծրագրի, հետևյալներն են:

Իսկոյն պետք է ուսուցանի սովորողներին ոգավել մայրենի լեզվից, վորը հանդիսանում է դասակարգային պայքարին, սոցիալիստական շինարարութեանը մասնակցելու, տեխնիկային ու բուշակիզմին տիրապետելու հզորագույն գեներից մեկը: Գրագիտութեանը տիրապետելը հանդիսանում է այնպիսի անհրաժեշտ պայման, առանց վորի դժվար է ակտիվ կերպով մասնակցել հասարակական-քաղաքական կյանքին: Վ. Ի. Լենինն ասել է «Անգրագետ մարդը քաղաքականութեանից դուրս է, նրան նախ պետք է այբուբեն սովորեցնել»:

Մակայն գրաճանաչութեանը միայն առաջին աստիճանն է: Առաջադրված խնդիրը լուծելու համար անհրաժեշտ է գրաճանաչութեան սովորեցնելուց զատ, զարգացնել սովորողների բանավոր և գրավոր խոսքը, սովորեցնել նրանց աշխատել գրքով և լրագրով:

Մայրենի լեզվի աշխատանքի չորս բաժինները պետք է ունենան ներքին որգանական այնպիսի կապ, վոր նրանք կազմեն մեկ ամբողջութեան:

Ծրագիրն ըստ առանձին բաժինների կազմված է այնպես, վորպեսզի դասատուն կարողանա պարզ կերպով հասկանալ, թե յուրաքանչյուր սովորող ամեն մի բաժնի գծով ինչ գիտելիքներ և ունակութեաններ է յուրացնում:

Մայրենի լեզվի ավանդման աշխատանքներն անհրաժեշտ է դասավորել այն հաշվով, վորպեսզի ապահովվի յուրաքանչյուր բաժնի լրիվ մշակումը:

ԹՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ
(125 ժամ)

(ԿԻՍՏԱՆԳՐԱԳԵՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ)

Մտաքի ծավալը.— Ամբողջ թվերի կարգան ու գրելը մինչև միլիարդ, ամբողջ թվերի գուրումը, հանումը, բազմապատկումն ու բաժանումը: Հասարակ կոտորակներ. կոտորակների գումարումը և հանումը, կոտորակի մեծացնելն ու փոքրացնելը միջանի անգամ, մասի գտնելը՝ յերբ տված է ամբողջը և ամբողջի գտնելն իրմասերից:

Տասնորդական կոտորակների կարգալը, գումարումը և հանումը, տասնորդական կոտորակի բազմապատկումն ու բաժանումն ամբողջ թվի վրա: Թվի տոկոսը գտնելը:

Ուղղանկյան և քառակուսու մակերեսի վորոշելը. ուղղանկյան տան ծավալը գտնելը:

ՄՇԱԿՄԱՆ ՀԱՋՈՐԴԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ.

1. Կլոր թվերի կարգալը միլիոնի սահմանում: Գաղափար միլիարդի մասին: Կարգալ միլիարդի սահմանում: Մեծ թվերի կլորացումը:

2. Կլոր թվերի գումարումն ու հանումը: Զերոներ նվազելի մեջ:

3. Բազմապատկուժ միանիշ թվի վրա: Բազմապատկուժ կլոր տասնյակներով, կլոր հարյուրակներով և կլոր հազարյակներով: Բազմապատկուժ յերկանիշ, յեռանիշ և բազմանիշ թվերով: Ձերոնները բազմապատկիչի մեջ: Ձերոնները բազմապատկիչների մեջտեղում և վերջում:

4. Բաժանում միանիշ թվի վրա: Յերկանիշ թվի բանավոր բաժանումը յերկանիշ թվի վրա: Գրավոր բաժանումը յերկանիշ, յեռանիշ և բազմանիշ թվերի վրա: Ձերոնները քանորդի միջում և վերջում: Բազմապատկման և բաժանման ստուգումը: Ժամանակի չափեր: Մեծ չափերի փոխարինումը փոքրերով և ընդհակառակը

5. Ուղիղ գծի հատվածի չափումը: Մակերեսի չափեր (քառակուսի մետր, քառակուսի դեցիմետր, քառակուսի սանտիմետր, ար, հեկտար, քառակուսի կիլոմետր): Ուղղանկյան և քառակուսու մակերեսների հաշվումը:

6. Իրազրամների և զրաֆիկների ընթերցումը:

7. Հասարակ կոտորակներ. (կոտորակների հայտարարները պետք է լինեն միայն միանուն կամ յերկանուն թվեր): Գողափար կոտորակի մասին:

Կոտորակի համարիչն ու հայտարարը: Կոտորակների կարգաչն ու գրելը: Անկանոն և կանոնավոր կոտորակ: Խառը թիվ: Անկանոն կոտորակից ամբողջ ստանալը: Խառը թիվն անկանոն կոտորակ դարձնելը: Կոտորակների համեմատումը: Կոտորակների մեծացումն ու փոքրացումը

մի քանի անգամ: Կոտորակի հիմնական հատկութիւնը: Կոտորակի կրճատումը: Միանման հայտարար ունեցող կոտորակների գումարումն ու հանումը: Տարբեր հայտարարներ (վորոնցից մեկը մյուսի բազմապատկիչն է) ունեցող կոտորակների գումարումն ու հանումը: Ամբողջի մասը գտնելը և աված մասերով ամբողջի գտնել (յերկու գործողությամբ):

8. Տասնորդական կոտորակների հաշվումը մինչև հազարերորդական մասը: Տասնորդական կոտորակի համարիչն ու հայտարարը: Թվանշանի տեղային նշանակութիւնը թվի մեջ: Տասնորդական կոտորակի հիմնական հատկութիւնը. տասնորդական կոտորակի վերջում գերոններ ավելացնելը կամ յեղած գերոնները ջնջելը կոտորակի մեծութիւնը մնում է անփոփոխ: Տասնորդական կոտորակի մեծացնելն ու փոքրացնելը 10, 100 1000 անգամ և այլն: Բարդ անվանական թվերի գրումը տասնորդական կոտորակով (մետրական չափեր): Մեծ թվերի կրճատ գրելը տասնորդական կոտորակով:

9. Տասնորդական կոտորակների գումարումն ու հանումը (բանավոր ու գրավոր):

10. Տասնորդական կոտորակի բազմապատկումն ամբողջ թվով (բանավոր և գրավոր): Ձերոններն արտադրյալի վերջում:

11. Տասնորդական կոտորակների բաժանումն ամբողջ թվի վրա (բանավոր և գրավոր): Ամբողջ թվի բաժանումը ամբողջ թվի վրա վորոշակի ճշտությամբ: Մոտավոր քանորդը պակա-

սորդով և ավելցուկով: Հասարակ կոտորակը տասնորդական դարձնելը:

12. Գաղափար տոկոսի մասին: ԹՎի մեկ կամ մի քանի տոկոսը գտնելը (բանավոր և գրավոր):

13. Ծավալի չափեր (խորանարդ մետր, խորանարդ դեցիմետր, խորանարդ սանտիմետր) ծավալային չափերի հարաբերությունները: Ուղղանկյուն սենյակի ծավալի հաշվումը:

14. Ավփոփում յեվ հաշվառում Ծանոթություն. —

1. Յուրաքանչյուր բաժինն անցնելիս պետք է խնդիրներ լուծվեն: Ամբողջ դասընթացի ընթացքում պետք է հատուկ ուշադրություն դարձնել սովորողների կողմից խնդիրներ կազմելու և լուծելու վրա, վերցնելով թվական ավյալները ձեռնարկության, քաղաքի, շրջանի վիճակագրական տեղեկություններին:

2. Դպրոցում պետք է լինեն հետեվյալ ոժանդակ պարագաները. համրիչներ, չափերի նմուշներ, մետրական չափերի աղյուսակ, կոտորակները և տոկոսներն իրազննորեն պատկերող աղյուսակներ:

ՅԱՄԵՐԻ ՈՐԻՆԱԿԵԼԻ ԲԱՆՇՈՒՄՆ ԸՍՏ ԹԵՄԱՆԵՐԻ

1. Հաշվում միլիարդի սահմանում: Գումարման և հանման կրկնություն: Միանիշ թվի վրա բազմապատկման կրկնությունը. բազմապատկում յերկանիշ և բազմանիշ թվերի վրա: (25ժ)

2. Միանիշ թվի վրա բաժանման կրկնություն: Բաժանում յերկանիշ և բազմանիշ թվերի

վրա: Ուղղանկյան և քառակուսու մակերեսի հաշվումը: Դիագրամների և գրաֆիկների ընթերցումը (28ժ):

3. Հասարակ կոտորակներ (22ժ):

4. Տասնորդական կոտորակների հաշվումը, գումարումը և հանումը: Տասնորդական կոտորակի բազմապատկումն ու բաժանումը ամբողջ թվի վրա (32ժ):

5. Տոկոսային հաշվումներ, ծավալների հաշվումներ և կրկնություն (18 ժամ):

Ծանոթություն.—Արտադրական պլան կազմելու ժամանակ դասատուն պետք է ժամանակ առանձնացնի կրկնության համար:

ԹՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

(Անգրագետների համար)

(130 ժամ).

Ծրագրի ծավալը. — Վեցանիշ ամբողջ թվերի կարգաչն ու գրելը. կլոր թվերով միլիոնների կարգաչն ու գրելը. կլոր թվերի գումարումն ու հանումը. կլոր թվերի՝ 10, 100, 1000 բազմապատկումն ու բաժանումը միանիշ թվերի վրա. Մետրական չափեր. յերկարության, ծանրության և ծավալի. ժամանակի չափեր. հասկացողություն մասերի և տոկոսների մասին:

ԲՅՅՆՏՐԱԿՆ

(Մշակման հաջորդականությունը)

1. Առաջին տասնյակի թվարկումը: 10 թիվը: Ձերոյի նշանակությունը թիվը թվանշանով գրելիս: Կլոր տասնյակներ: Գումարման, հանման և հավասարման նշաններ: 20-ից բարձր յերկանիշ թվերի հաշվումը: Թվանշանների տեղերի նշանակությունը թվերի մեջ: 11-ից մինչև 19-ը: Թվերի թվարկումը:

2. Թվերի բանավոր գումարումը 100 ի սահմանում: գրավոր լուծումը մի տողի վրա (պա-

տասխանը գրել կողքին) գումարման աղյուսակ:
3. Թվերի բանավոր հանումը 100-ի սահմանում: Որինակների գրավոր լուծումը մի տողի վրա. (պատասխանը գրել կողքին): Հանման աղյուսակ: Գումարման և հանման ստուգումը:

4. Բանավոր գումարման յեվ հանման պարզեցրած ձևերը 100-ի սահմանում:

5. Յեռանիշ և քառանիշ թվերի թվարկումը: Թվերի կարգերը:

6. Յեռանիշ և քառանիշ թվերի գրավոր գումարումը. գումարելիներ: Գումար: Ձերոն գումարելիների մեջ: Բարդ անվանական թվերի գումարումը. ուրբի և կոպ. որ և ժամ:

7. Յեռանիշ և քառանիշ թվերի գրավոր հանումը: Նվազելի, հանելի: Տարբերություն կամ մնացորդ: Ձերոն նվազելիի մեջ: Գումարման յեվ հանման ստուգումը: Բարդ անվանական թվերի հանումը (ուրբ. և կոպ. որ և ժամ):

8. Հոտմեական թվանշաններ: Հոտմեական թվանշանների գրությունը հոտմեական թվանշաններով և նրանց կարգաչը I—XII—ը:

9. Հնգանիշ և վեցանիշ թվերի թվարկումը: Միավորների յեվ հազարավորների կարգերը. կարգեր ու դասեր: Հնգանիշ և վեցանիշ թվերի գումարումն ու հանումը:

10. Հասկացողություն բազմապատկման մասին: Բազմապատկելի: Բազմապատկիչ: Արտադրյալ: Միանիշ թվերի բազմապատկումը աղյուսակը: Յերկանիշ թվի բազմապատկումը միանիշով (բանավոր): Ձերոյով վերջացող թվերի բանավոր յեվ

գրավոր բազմապատկումը միանիշով: Ձերոն բազմապատկելիի մեջ:

11. Հասկացողություն բաժանման մասին: Բաժանելի, բաժանարար և քանորդ: Բաժանման աղուսյակ 100-ի սահմանում:

Բազմապատկման և բաժանման ստուգումը: Յերկանիշ և յեռանիշ թվերի բաժանումը միանիշի վրա, յերբ բաժանելիի յուրաքանչյուր կարգը բաժանվում է առանց մնացորդի: Բանավոր բաժանումը մնացորդով: Յերկանիշ թվի բաժանումը միանիշի վրա (բանավոր) յերբ քանորդում ստացվում է յերկանիշ թիվ: Բազմանիշ թվի բաժանումը միանիշի վրա: Ձերոն ամբողջ թվի մեջ և քանորդի վերջում:

12. Ամբողջ թվերի թվարկումը միլիոնի սահմանում: Կլոր միլիոնների թվարկումը: Կլոր միլիոնների գումարում և հանումը: Որինակների գրավոր լուծումը յեվ գրանցումը մի տողի վրա: Ձերոնները նվազելիի մեջ:

13. Ամբողջ թվի բազմապատկումն ու բաժանումը 10-ի, 100-ի և 1000—ի վրա:

14. Մետրական չափեր, յերկարության, ծանրության և ծավալի: Մեծ չափերի վերածումը փոքր չափերի և ընդհակառակը: Բարդ անվանական թվերի գումարումն ու հանումը: Ժամանակի չափեր (Դար, տարի, ամիս, որ ժամ, րոպե

և վայրկյան): Մեծ չափերը վերածելը փոքր չափերի:

15. Հասկացողություն մասերի մասին, նրանց առաջանալը: Մասերի գրելը և կարդալը $\frac{1}{2}$, $\frac{1}{4}$, $\frac{1}{10}$, $\frac{1}{100}$: Հասկացողություն տոկոսի մասին: Տոկոսն արտահայտել կոտորակով (50_0 , 25_0 , 10_0):

16. Անցածի կրկնողություն և հաշվառում:

Ծանոթություն. — ա) Յուրաքանչյուր բաժինն անցնելիս պետք է զուգընթացաբար խնդիրներ լուծել: Ամբողջ աշխատանքի ընթացքում դասավի դեկավարությամբ սովորողները պետք է կարողանան ինքնուրույն ձեվով կազմել խնդիրներ, վորոնց թվական տվյալներն անպայման պետք է վերցնել տվյալ շրջանի, քաղաքի, հիմնարկի վիճակագրական ճիշտ թվական տեղեկություններից:

բ) Դասի սարքավորման համար պետք է վերցնել՝ համրիչ, չափերի-նմուշներ, աղուսյակներ (բազմապատկման և բաժանման) մետրական չափեր և աղուսյակներ $\frac{1}{2}$, $\frac{1}{4}$, $\frac{1}{10}$ և $\frac{1}{100}$ մասերի և տոկոսների պատկերացումներով:

Ժամերի ուրինակելի բախումն ըստ թեմաների

1. Թվարկում, գումարում յեվ հանում ամբողջ թվերի-հարյուրի սահմանում . . . (30ժ)
2. Թվարկում, գումարում և հանում յեռանիշ, քառանիշ, հնգանիշ և վեցանիշ թվերով: Հոսովական թվանշաններ (26ժ)
3. Բազմապատկում միանիշ թվով . . . (18ժ)
4. Բաժանումը միանիշ թվի վրա . . . (22ժ)
5. Թվարկում, գումարում և հանում կլոր միլիոնների: Բազմապատկում և բաժանում 10-ի,

100-ի և 1000 վրա: Մետրական չափեր: Ժամանակի չափեր: Հասկացողութիւնն մասերի և տուրանների մասին (34Ժ):
Ծանոթութիւն. — Արտադրական պլանը կազմելու ժամանակ պետք է դասատուն ժամանակ առանձնացնի կրկնողութիւն համար:

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

(Կիսադրագետների համար)

1 Ի՞նչ է աշխարհագրութիւնը յե՛վ ի՛նչ ո՞ւր պե՛տք է այն սովորել.

Աշխարհագրութիւնն նշանակութիւնը (կրթական, գործնական և քաղաքական): Տարբեր յերկրների բնութիւն, տնտեսութիւն և կուլտուրայի զանազանութիւնն ցուցադրումը:

II ՅԵՐԿԻՐԸ — ՄՈՂՈՐԱԿ

Հասկացողութիւնն հորիզոնի մասին, հորիզոնի կողմերը և կողմնորոշում տարածութիւնն մեջ: Հորիզոնի ընդարձակումը վեր բարձրանալուն համընթաց:

Յերկրի ձևը. յերկրի գնդաձևութիւնն ապացուցներ: Գլոբուսը վորպես յերկրագնդի պատկերում:

Յերկրագնդի պտույտն իր առանցքի և արեգակի շուրջը. ի՞նչ է առաջանում այդ պտույտի հետևանքով: Յերկրագնդի որական շարժումը՝ գիշեր և ցերեկ: Բևեռներ և հասարակած:

Յերկրագնդի տարեկան շարժումը: Յերկրագնդի առանցքի թեքութիւնը և տարվա յեղանակները:

Գիշերվա և ցերեկվա աւտղության փոխվելը տարվա ընթացքում:

Արեգակը վորպես շերմության և եներգիայի (և առհասարակ կյանքի) աղբյուր յերկրի վրա:

Արեգակնային համակարգութուն: Յերկրագնդի զիրքն արեգակնային համակարգության մեջ:

Առաջներում ինչպէս ելին պատկերացնում յերկիրը: Կարևորագուշն մոմենտներ յերկրի մասին ճիշտ պատկերացում ունենալու համար մըղված պայքարի պատմությունից (Կոպերնիկ, Բրունո, Գալիլեյ): Արեգակնային համակարգությունը վորպես տիեզերքի մի մասը: Աստղեր և մոլորակներ: Յերկիրը — մոլորակ

III. ՊԱՆ ՅԵՎ ՔԱՐՏԵԶ

Գաղափար պլանի մասին. պլանը կառուցելու ձևերը և գործադրությունը:

Պլանը և աշխարհագրական քարտեզը:

Յերկրի մակերեսի պատկերումը գլոբուսի և կիսագնդերի քարտեզի վրա:

Աշխարհագրական ցանցը: Զուգահեռականներ և միջորեյականներ: Աշխարհագրական լայնություն: Աշխարհագրական յերկարություն: Աշխարհագրական ցանցից ոգտվելու տարրական հմտություններ: Յամաքի և շրի բախշումն յերկրագնդի վրա:

Աւելադի մասերը. Յեվրոպա, Ասիա, Աֆրիկա, Ամերիկա (հյուսիսային և հարավային), Ավստրալիա և Անտարկտիդա:

Ովկիանոսները. Խաղաղ կամ մեծ, Ատլանտյան, Հնդկական, Հյուսիսային սառույցյալ:

Գաղափար ծովի, ծոցի և նեղուցի մասին: Ծովերը. Բալթիկ, Սև, Միջերկրական, Կասպիական ծոցերը, Մեքսիկական, Բիսկայան, Բենգալյան, Ֆրինական:

IV. ՅԵՐԿՐԻ ԿԵՂԵՎԸ

Յերկրագնդի կեղևները: Յերկրի կարծր և զազային (մթնոլորտ) կեղևները: Յերկրագրնդի ներքին կազմությունը: Յերկրի կեղևի կազմությունը: Հրաբուխներ, յերկրաշարժեր: Զանգվածային և նստվածքային լեռնային տեսակներ:

Յերկրի մակերևույթի ձևերը, դաշտավայրեր, բարձրություններ և լեռներ: Նրանց պատկերացումը քարտեզի վրա:

Յերկրի ընդերքի հանածո հարստություններն եներգիայի և հումքի կարևորագուշն աղբյուրներն են:

Աշխարհամասերի մակերևույթի ուսումնասիրությունը քարտեզով:

Յեվրոպա. Արևելա-Յեվրոպական, Գերմանական, Ֆրանսիական դաշտավայրեր. Ալպյան, Կարպատյան, Ուրալյան և Կովկասյան լեռներ:

Ասիա. Արևմտա-Միջերկրական, Թուրանի, Չինական դաշտավայրեր: Պամիրի լեռնաշխարհ Տյան-Շան և Հիմալայան լեռներ:

Ամերիկա. Միսիսիպի, Ամազոնի դաշտավայրեր: Կորդիլերյան, Ալեգանյան լեռներ:

ՈՎԿԻԱՆՈՍՆԵՐ, ԾՈՎԵՐ, ԳԵՏԵՐ ՅԵՐ ԼՃԵՐ

Ովկիանոսներ յեվ ծովեր. — Ովկիանոսների խորությունը:

Ծովային ջրի աղիութիւնը: Ծովային հոսանքներ (ցուրտ և տաք): Մակընթացութիւններ և տեղափոխութիւններ. ծովափնյա գծի կարափածութիւնը. ծոցեր, նեղուցներ, թերակղզիներ և կղզիներ: Ծովերի հաղորդակցային և արդյունագործական նշանակութիւնը:

Ծովային կարևոր ճանապարհներ և պայքար նրանց համար:

Փովեր. Միջերկրական, Սև, Կասպից, Բայթիկ, Ծապոնական:

Թերակղզիներ. Սկանդինավիայի, Պիրենեան, Ապենինյան, Բալկանյան, Դրիմի, Հնդկական, Հնդկաչինի, Կամչատկա, Ափշերոն:

Կղզիներ. Գրեկանդիա, Մեծ Բրիտանիա, Չոնգյան, Ծապոնական, Ովկիանիա:

Նեղուցներ. Զիբրալտարի, Դարդանելի, Բոսֆորի, Բերինգյան:

Զբաղմունքներ. Սուեզի և Պանամայի:

Յամափ ջրեր. Գետնի ջրեր: Աղբյուրներ:

Գետեր. Գետերի սնումը և ուղղութիւնը:

Գետերը վորպես հաղորդակցութեան ճանապարհներ: Եներգիայի և վտուցման սղբյուրներ: Զբանցքներ: Զրի կործանարար և շինարար աշխատանքը. ձորեր, գելտաներ, կղզիներ:

Գետեր—Վոլգա, Ոկա և Կամա վտակներով, Դնեպր, Դանուբ, Հոննոս, Ոբ, Յենիսեյ, Լենա, Ամուր, Նեղուս, Միսիսիպի, Սմազոն:

Լներ. հոսող և կանգնած. աղի և քաղցրահամ: Լճեր—Լադոգա, Ոնեգա, Արալյան, Բայկալ, Բալխաշ:

Յեղանակ, նրա տարրերը. շերմութիւն, քամիներ, տեղումներ: Գաղափար կլիմայի մասին: Կլիմայի նշանակութիւնը տնտեսութեան համար: Պայքար կլիմայական վնասարար պայմանների դեմ:

Արեգակի տարբեր բարձրութիւնը հորիզոնի վրա՝ յերկրագնդի տարբեր վայրերում: Յերկրագրնդի բաժանումը հինգ գոտիների:

Յամաքի և ծովի անհավասար տաքանալը: Յամաքային և ծովային կլիմա: Ծովային հոսանքների ազդեցութիւնը կլիմայի վրա: Տեղի (վայրի) բարձրութեան ազդեցութիւնը կլիմայի վրա (լեռնային կլիմա): Մթնոլորտային տեղումների բախշումն յերկրագնդի վրա: Խոնավ շրջաններ: Յերկրագնդի անապատները:

VII ՅԵՐԿՐԱԳՆԴԻ ՀՈՂԱՔՈՒՄԱԿԱՆ ԳՈՏԵՐԸ

(Զոնաները)

Հողի, բուսականութեան և կենդանական աշխարհի կախումը կլիմայից: Սրանց գոտիական (զոնալ) տեղաբախշումն յերկրագնդի վրա:

Բևեռային շրջաններ, տունդրա, անտառ, տափաստան, կիսաանապատ, մերձարևադարձային շրջաններ, արևադարձային անտառներ և սավանններ: Գոտիներից յուրաքանչյուրի հողերի, բուսականութեան և կենդանիների բնութագրումը:

Բնական հարստութիւնների ոգտագործումը մարդու կողմից առաջ և հիմա: Այս տեսակետից գիտութեան, տեխնիկայի և յերկրի հասարա-

կական կառուցվածքի (կապիտալիստական և սոցիալիստական) դերը:

VIII. ՅԵՐԿՐԱԳՆԴԻ ԲՆԱԿԶՈՒԹՅՈՒՆԸ

Յերկրագնդի բնակված և անբնակ վայրերը: Յերկրագնդի բնակչության քանակը: Նրա բախշումն ըստ աշխարհամասերի: Ռասաներ: Բարձր և ցածր ռասաների ուսմունքի կեղծությունը: Բնակչության խտությունը: Ամենախիտ բնակչություն ունեցող վայրերը յերկրագնդի վրա ներկայումս: Յերկրագնդի բնակչության աշխարհագրական տեղաբախշումն առաջներում:

IX. ԱՇԽԱՐՀԻ ԱՐԴԻ ՊԵՏԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄԸ

Ինչնով են տարբերվում կապիտալիստական յերկրները ԽՍՀ Միությունից: Պետական իշխանություն կազմությունը կապիտալիստական յերկրներում (բարձրագույն իշխանություն ներկայացուցիչն է՝ թագավորը կամ պրեզիդենտը, գործադիր իշխանությունը՝ պրեմիեր-մինիստրը և մինիստրները, որենադիր իշխանությունը՝ պարլամենտը): Պարլամենտական ընտրությունները և նրանց բնույթը տարբեր յերկրներում: Յերկրների բախշումը Յ խմբի-ըստ կապիտալիզմի զարգացման մակարդակի:

1. Բարձր զարգացման յերկրներ, ԱՄՆ, Անգլիա, Գերմանիա, Ֆրանսիա, Ճապոնիա, Բելգիա, Հոլանդիա, Չեխոսլովակիա և այլն:

2. Միջին զարգացման յերկրներ, Լեհաստան, Իսպանիա, Ռումինիա, Բուլղարիա և այլն:

3. Գաղութներ և կախյալ յերկրներ. Հնդկաստան, Հնդկաչին, Չինաստան, Յեզիպոս, Լիբիա, Ալժիր և այլ յերկրներ Աֆրիկայում, Ամերիկյան մեծ մասը (առանց ԱՄՆ-ի): Կապիտալիստական յերկրների քաղաքականությունը գաղութների և կախյալ յերկրների նկատմամբ: Պայքար հումքի աղբյուրների և շուկաների համար: 1914-1918 թ.թ. իմպերիալիստական պատերազմը, նոր պատերազմների պատրաստումը հանուն աշխարհի և աղբյուրություն շրջանների վերաբաժանման:

Համառոտ ցեղաբաշխում. ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի, Գերմանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի, Ճապոնիայի և մեր հարևանների (Ֆինլանդիայի, Եստոնիայի, Լատվիայի, Լեհաստանի, Ռումինիայի, Թյուրքիայի, Իրանի, Ադվանստանի, Չինաստանի և Մոնղոլիայի ու Տուվայի ժողովրդական հանրապետությունների) մասին:

X. ԽՍՀՄ ՀԱՄԱՌՈՏ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

1. ԽՍՀՄ-ի դիրքը:

Տերիտորիայի չափերը և բնակչության քանակը: ԽՍՀՄ-ի դիրքը Յեվրոպայում և Ասիայում:

Յամաֆային սահմանները. — (սահմանամերձ յերկրներ):

Ծովային սահմաններ. Ծովեր — Բարենցի, Սպիտակ, Կարայի, Բերինգյան, Ուստի, Ճապոնական, Սև, Ազովի, Կասպից, Բալթիկ:

Թերակղզիներ. Դրիմ, Կոլա, Կամչատկա, Չուկոտյան, Թայմիր:

Կղզիներ. Սախալին, Նոր Յերկիր:

Նավահանգիստներ. — Լենինգրադ, Մուրմանսկ, Արխանգելսկ, Իզարկա, Վլադիվոստոկ, Նովորոսիյսկ, Ուդեսսա, Բաթումի:

2. ԽՍՀՄ-ի սահերեվոյքը. — Դաշտավայրային հարթութիւնների գերակշռումը: Բարձրութիւններ: Լեռների դասավորումը ծայրամասերում:

Դաշտավայրեր. Արևելա-Յեվրոպական, Արևմտա-Սիբիրական, Թուրանի:

Հայաստանում՝ Արարատյան, Աբարանի, Շիրակի: Ազրբեջանում՝ Մուղանի: Վրաստանում՝ Ալագանի:

Բարձրություններ. Միջին-Ռուսական, Մերձվոլգյան, Դոնեցի. Միջին-Սիբիրական լեռնաշխարհը. Հայաստանում՝ Լոռու, Չանգեզուրի: Ազրբեջանում՝ Մուսվ:

Լեռներ. Ուրալյան, Ղրթի, Կովկասյան, Խիբինի, Պամիրի, Տյան-Շան, Ալտայան, Կամչատկայի և այլն: Հայաստանում՝ Չանգեզուրի:

3. ԽՍՀՄ-ի ոգսակար հանածոները. Ոգտակար հանածոների չհետազոտված լինելը ցարական Ռուսաստանում: Խորհրդային ժամանակաշրջանում ձեռք բերած նվաճումները:

Բարածխային ավազան. — Դոնեցի, Կուզնեցկի, Կարագանդայի, Լնդմոսկովյան և այլն: Վրաստանում՝ Տկվիբուլի և Տկվարչելի:

Նավթ. Բազու, Գրոզնի, Եմբա և այլն:

Յերկաքահանգ. Կերչ, Կրիվոյ Ռոզ, Ուրալ (Բլագոդա, Մազնիտնայա, Խալիլովո), Կուրսկի մազնիտային անոմալիան (ԿՄԱ). Ազրբեջանում՝ Դաշոբեսան:

Պղնձահանգ Ուրալ, Կազախստան, Հայաստանում՝ Ալանդերդու, Լափանի:

Վոսկի. Սիբիր, Ուրալ, Միջին Ասիական հանրապետութիւններ:

Ապատիտներ և ֆոսֆորիտներ:

Մարգանեց. Ուկրաինա, Վրաստան (Չիատուրի):

4. ԽՍՀՄ-ի գետերն ու լճերը. Գետերի հարթահոս բնույթը: Երանց առանձնահատկութիւնները. ձմեռը՝ սառցնապատում, գարնանը՝ վարարում, ամառը՝ ծանծաղում: Գետերի ողտազործումը նավաղնացութիւն, ելեկտրիֆիկացիայի, վոռոգման համար: Զրանցքներ:

Գետեր. Հյուսիսային Դվինա, Պեչորա, Ուրալի վտակով, Յենիսեյ, Անգարա վտակով, Լենա, Ամուր, Եկա, Վոլխով, Սվիր, Դնեպր, Դոն, Վոլգա-Ուկա և Կամա վտակներով, Սիբ-դառիա և Ամուր-դառիա: Վրաստանում՝ Կուր, Արագվա, Ալագան, Յորա, Խրամ վտակներով, Ճորոխ, Ռիոն (Թափվում են Սև ծովը): Ազրբեջանում՝ Կուր և Արաքս (ստորին հոսանքները): Հայաստանում՝ Արաքս, Չանգու, Արևելյան Արփաչայ, Բազարչայ, Մեղրի վտակներով, Կուրի վտակ Խրամի մեջ թափվում է Դերեղը, վոր կազմվում է Փամբակ և Չորագետ գետերից:

Զրանցքներ. Վոլգա-Բալթիկ ծովյան, Սպիտակ-Բալթիկ ծովյան, Վոլգա Մոսկվա (վորպես հաղորդակցութիւն ճանապարհներ): Ազրբեջանում՝ Միլի տափաստանում:

Լճեր. Լադոգա, Ոնեգա, Ելտոն, Բասկունչակ, Արալյան, Բալխաշ, Բայկալ, Վրաստանում՝ Թափարավան. Հայաստանում՝ Սևան:

ԽՍՀՄ-ի կլիման յեվ հողաբուսական գոտիները.
ԽՍՀՄ-ի տեղադրվածութունը ցուրտ և բարե-
խառն կլիմայում: Հյուսիսային սառուցյալ, Խա-
ղաղ և Ատլանտյան օվկիանոսների ազդեցութուն-
նը: Կլիմայի փոփոխութունն արևմուտքից-արև-
ելք (դեպի արևելք՝ ցամաքային կլիմայի հատ-
կութունների ուժեղացումը):

ԽՍՀՄ-ի հողաբուսական գոտիները:
Արևմտյան, արևելյան և հարավային Անդրկով-
կասի կլիմայի առանձնահատկութունները: Հո-
ղաբուսական գոտիների ուղղածիզ դասավորվա-
ծութունն Անդրկովկասում:

6. ԽՍՀՄ-ի բնակչությունը. Բնակչության
քանակը: Բնակչության բնական աճը: Բնակչու-
թյան խտությունը և նրա դասավորվածութունը
ԽՍՀՄ-ի տերիտորիայի վրա: ԽՍՀՄ-ի բնակչու-
թյան ազգային կազմի բազմազանությունը: Ան-
դրրկովկասի բազմազգի ժողովուրդները:

7. ԽՍՀՄ-ի պետական կառուցվածքը. ԽՍՀՄ-ի
հասարակական կառուցվածքը: ԽՍՀՄ-ն բանվոր-
ների և գյուղացիների սոցիալիստական պետու-
թյուն է, նրա քաղաքական և տնտեսական հիմ-
քը: ԽՍՀՄ-ի քաղաքացիների հիմնական իրա-
վունքները և պարտականությունները: ԽՍՀՄ-ի
պետական կառուցվածքը:

11. Միութենական հանրապետու-
թյուններ՝ ԲՍԽՀ, ՈՒՍԽՀ, ՀՍԽՀ, ՎՍԽՀ, ԱՍԽՀ,
ԹՍԽՀ, ՈՒԶՍԽՀ, ՏՍԽՀ, ԿՍԽՀ, ՂՍԽՀ, ՌՍՖՍՀ
և նրանց մայրաքաղաքները: Յուրյ տալ Ռու-

սաստանի և միությունական հանրապետություն-
ների մարզերը և շրջանները

ԽՍՀՄ-ի պետական իշխանության բարձրա-
գույն օրգանները: Գերագույն Խորհուրդը և նրա
կազմը: Միության խորհուրդ և Ազգություննե-
րի խորհուրդ: Ժողովրդական Կոմիսարների
խորհուրդ: Հնդհանուր, ուղղակի, հավասար և
գաղտնի քվեարկություն (ընկ. Ստալինի զեկու-
ցումը Խորհուրդների արտակարգ 8-րդ համագու-
մարում և Սահմանադրության 1-11 գլուխները):

8. ԽՍՀՄ-ի սիստեությունը. Բնական հարստու-
թյուններն ու սոցիալիստական սիստեմը խոշոր
հնարավորություններ ստեղծեցին ԽՍՀՄ-ի տնտե-
սության զարգացման համար: Առաջին և յերկ-
րորդ հնգամյակի նվաճումները (մեր յերկիրը
հետամնաց վիճակից վերածվեց հզոր ինդուստ-
րիալ յերկրի): Յերկրի պաշտպանունակության
հզորության ամրապնդումը: Ազգային շրջանների
և ծայրամասերի – ցարական Ռուսաստանի այս
նախկին գաղութների, իսկ այժմ ԽՍՀՄ-ի հա-
վասարագոր անդամների տնտեսական և կուլտու-
րական վերելքը:

Ելեկտրիֆիկացիան—Խորհրդային իշխանու-
թյան տնտեսական և տեխնիկական քաղաքակա-
նության հիմքն է: Խոշորագույն ելեկտրոկայան-
ների կառուցումը, վորտեղ ոգտագործում են
վառելիքի զանազան տեսակները (քարածուխ,
նավթ, տորֆ և այլն), ինչպես և ջրի եներդիան
(«Սպիտակ ածուխը») և քամին. ելեկտրոկա-
յաններ—Շատուրի (տորֆ), Դնեպրի և Վոլխովի

(«սպիտակ ածուխ»), Կաշիրի (տեղական գորշ քարածուխ), Շտերովի (քարածխային շտիբ) և այլն: Վրաստանում՝ Ռիոնգես, Չագես, Հայաստանում՝ Չորագես, Երգես, Քանաքեռագես, Սևան-Չանդու կասկադ: Ադրբեջանում՝ Թարթաուգես, Ստեփագես, «Կրասին» և «Կարմիր աստղ» Բագվում:

Արդյունաբերությունը. Խոշորագույն գործարաններն ու կոմբինատները. մետաղամր-շակման (Մագնիտոգորսկ, Ստալինսկ, Դոնբաս, Կրիվոյ-Ռոդ, Կերչ, Տագիլ). Ավտոմոբիլային (Մոսկվա, Գորկի): Տրակտորային (Ստալինգրադ, Խարկով, Չելյաբինսկ), Կոմբայնների (Սարատով), Շոգեկառքա-վագոնային (Կոլոմնա, Լուգանսկ և այլն), Նավաշինարարական (Լենինգրադ, Վյադիվոստոկ, Գորկի, Նիկալայեվ), Ելկտրոտեխնիկական և Գազգահաշինարարական (Մոսկվա, Լենինգրադ), Քիմիական (Բերեզնիկի, Ստալինոգորսկի, Դոնբասի), տեքստիլ գործարաններ (Մոսկովյան և Իվանովյան մարզեր, Լենինգրադ, Դաշքենդ, Բարնաուլ, Սիբիր), Թղթի գործարաններ (Բալախնայի, Լենինգրադի մարզի և Կարելիայի): Թեթև և սննդի արդունաբերության զարգացումը ԽՍՀՄ-ում:

Վրաստանում տեքստիլ, սննդի, մետաղամր-շակման, քիմիական և այլն: Ադրբեջանում տեքստիլ, բամբակագործական, նավթամշակման և այլն: Հայաստանում՝ քիմկոբինատ, կաուչուկ փայտամշակման, մետաղամշակման, կոնսերվի, ծխախոտի, կարբիդի, ձեթ-ոճառի, բամբակամր-շակման, տեքստիլ և այլն:

Գյուղատնտեսություն. Գյուղատնտեսության վերակառուցումը (ԽՍՀՄ-ն դարձել է ամենախոշոր և առաջավոր սոցիալիստական գյուղատնտեսական յերկիրն ամբողջ աշխարհում): Կոլեկտիվ և խորհրդային տնտեսություններ: Բարտեզով ցույց տալ—ցորենի, բամբակի, վուշի և անասնապահության գլխավոր շրջանները: Վրաստանի և Ադրբեջանի բամբակի, խաղողի, ծխախոտի, հացահատիկների մշակության, անասնապահության գլխավոր շրջանները: Ադրբեջանի ավտոյերթևեկության գլխավոր գծերը՝ Յեվլախ-Ստեփանակերտ, Յեվլախ-Նուխի, Բագու Շամախի, Յեվլախ-Չաքաթալա, Բագու-Սալյան և այլն:



*Պատ. խմբագիր՝ Հ. Բ ա ռ ա ջ ա ն յ ա ն
Տեխ. խմբագիր՝ Գ. Դ ո ն դ ա Ր ո վ
Սրբագրիչ՝ Դ ա վ Թ յ ա ն*

Сдано в набор 22/XII-37.
Подписано к печати 3/III-38.
Печатных листов 2^{3/4}. Формат бумаги 72×110^{1/32}.
Колич. знаков в печ. листе 32.800
Уполномоч. Главлита № 1021.
Азернешр № 829/104.
Тираж 1500. Заказ № 1478.

Тип. Азернешр Дворец книги им. 26. Баку,
ул. Али Байрамова.

«Ազգային գրադարան»



NL0222520

52. 215

Գրքեր Ե 40 4.

292

SAVADSԵZԼԵՐԻՆ ՎՅ AZSAVADԼԵԼԵՐԻՆ
ԼՅՈՎ ԵՏՄՅ ՄՅՐՅ ՃԱՏԼԵԼԱՐ
ՄՅԿՏՅԼՅՐԻՆԻՆ
PROGRAMMASԵ

AZƏRNƏŞR
Bakь — 1937